

# ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՐԱԿԱԾ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՐԳՆ Է

Posted on October 4, 2010 by Keghart



Category: [Opinions](#)



Եղիկ Բաղդասարյան, [Zetunp online](https://www.zetunp.com), Երեւան, 4 Հոկտեմբեր 2010

Պաշտոնյաների կատարած չարաշահումների մասին փաստեր հրապարակելով՝ այլևս ոչ մեկին չես զարմացնի:

Ոչ ոքի չես ցնցի՝ գրելով, որ ինչ-որ մեկը 500 հազար դոլար է վճարել ԱԺ-ում իր տեղն ունենալու համար: Ոչ մեկի համար նորություն չի լինի, եթե ցույց տաս, թե Հայաստանում գործող որ ձեռնարկության իրական տերը որ պաշտոնյան է: Դա նորմ է, որ արդեն դարձել է հայի գենետիկ փոխանություն: Շատերը կարող են ասել՝ միշտ էլ այդպես է եղել, կամ բոլոր երկրներում էլ այդպես է: Եվ նման բան ասողներին ոչինչ չես էլ կարող պատասխանել, անիմաստ է: Հայերը չեն կարողանում ստեղծել իրենց աշխարհը: Խոսքն, իհարկե, վարչապետ Տիգրան Սարգսյանի «Հայկական աշխարհ»-ի մասին չէ:

Ինչ է այսօր կատարվում հայ մարդու հետ: Հայի միջև այլևս կենսունակ չէ, այն վաղուց է փշրվել: Հայն իր երկիրը կործանում է, իր բնությունը՝ ոչնչացնում, թողնում-փախչում է իր հայրենիքից:

Երբեմն թվում է, որ այս ամենը դավադրություն է՝ ինչ-որ մի տեղ ծրագրված: Բայց դա մի պահ է տեսնում, քանի որ ոչ մի դավադրություն էլ չկա, պարզապես չկա դրա անհրաժեշտությունը: Հայաստանը դատարկվում է, հայերը փախչում են իրենց հայրենիքից:

Ու սա չի անհանգստացնում իշխանություններին, նրանց անհանգստացնողը միայն մի բան է՝ պահել իշխանությունը եւ մեծացնել իրենց ունեցվածքը: Նրանք իրենց հոգիները լցրել են փողով:

Դատարկվող գյուղերն անեծքի պես խրվել են երկրի կոկորդի մեջ, ու սա ոչ մի իշխանություն չի կարող մարսել: Լքված ծերերը քարշ են գալիս դատարկ գյուղերի փողոցներում, իրենց զավակներին կարոտելով՝ անիծում են էս երկիրը:

Պարզ է, չէ՞, որ անօրինականությունների, անպատժելիության այս անվերջ շարունակվող շղթայի գինը դատարկվող Հայաստանն է: Համատարած աղքատության մեջ ամենօրյա այս խրախճանքները՝ գիշերային հրավառություններով, ջիպերով, կրակոցներով, պետական միջոցների թալանով սարքված ահռելի չափերի առանձնատներով ու ամառանոցներով, չորս միլիարդանոց Ռոբերտ Քոչարյան ստեղծելու գինը դատարկվող Հայաստանն է: Մի ուրվական է շրջում Հայաստանում՝ կորսված հայրենիքի ուրվականը:

Կենցաղային մակարդակում մարդիկ դեռ հավատում են միմյանց, բայց երբ խոսք է բացվում որեւէ պետական ինստիտուտի մասին, ամեն ինչ փլուզվում է: Ինչպե՞ս հասանք սրան, ինչպե՞ս երկիրը հասցրինք այս սահմանագծին: Նույնիսկ մինչեւ բանակ հասցրինք այս փլուզումը, մինչեւ գիշերը մթության մեջ թշնամուն դեմ-դիմաց կանգնած

տասնութ տարեկանը, մինչեւ այն բանակը, որն ամեն հայի համար «անձեռնմխելի» մի կառույց էր:

Պետական բոլոր օղակները, կուսակցությունները ներգրավված են Հայաստանը դատարկելու գործընթացում: Ու դրանցից ոչ մեկը չի ասում՝ կանգնեք, պարոնայք, այսպես ապրել այլեւս հնարավոր չէ:

Հայի մեր տեսակը չի կարողանում հայրենիք կառուցել: Հայի մեր տեսակը միայն մի երգ գիտի՝ կորսված հայրենիքի երգը: Այդ երգը որեւէ բան անելու ջանք չի պահանջում: Այն վաղուց գրված է: Ու մենք, կարծես, ավարտել ենք ընտրությունը, արգելակվել ենք կորսված հայրենիքի երգի վրա:

Տարիների ընթացքում մսխեցինք ամեն ինչ, նվաճած անկախության ամեն մի սանտիմետրը, քայլ առ քայլ, բոպե առ բոպե զիջեցինք, առանց դիմադրելու «մարսեցինք» այդչափ անարդարություններ: Հետո այդ հսկա անիվը գլորվելով սկսեց ճզմել յուրաքանչյուրիս: Ու հայտնվեցինք այնտեղ, որտեղ պիտի լինեինք, ունեցանք այն, ինչ պիտի ունենայինք:

Լուս.՝ Մաքս Սիվասյանի

